

# ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Լրատու

ՄԱՅԻՍ 25 - ՀՈՒՆԻՍ 7 2016 Թ. ԹԻՎ 13 (2101)

ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



### Համագործակցության հեռանկարներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է «Հայկական տեխնոլոգիական խումբ» հիմնադրամի խորհրդի նախագահ Ջեյմս Ռեյնոլդսի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին հիմնադրամի գործադիր տնօրեն Վարուժան Տեր-Սիմոնյանը, հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Գագիկ Սկրչայանը, այլ անձինք:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հիմնադրամի միջոցներով Հայաստանում իրականացվող ծրագրերի ընթացիկ արդյունքները և երկկողմ համագործակցության ընդլայնման ուղղություններն ու հեռանկարները: «Հիմնադրամը ստեղծման օրվանից ի վեր մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գործում լայնածավալ և էական կարևորություն ունեցող աշխատանք է իրականացնում՝ հանդես գալով ոլորտում ժամանակի պահանջը հանդիսացող նորագույն տեխնոլոգիաների կիրառման նախաձեռնություններով»,- նշել է նախարար Կարապետյանը:

Նախարարը մասնավորապես կարևորել է անվար ցանքի տեխնոլոգիայի ներդրման հիմնադրամի նախաձեռնությունը և այս ուղղությամբ կատարված աշխատանքները՝ ընդգծելով, որ այն հատկապես էական նշանակություն կունենա, եթե կիրառվի մեր հանրապետության անջրդի հողերի մշակությունն իրականացնելու գործում: Կողմերն անդրադարձել են նաև անասնապահության ոլորտում նախորդ տարի հիմնադրամի աջակցությամբ անասնաբուժական ծառայությունների իրականացման համար շարժական լաբորատորիայի ներդրմանը, որը հնարավորություն է տալիս հետազոտություններ իրականացնել դաշտային պայմաններում՝ այդպիսով արագորեն կանխարգելելով հիվանդությունների տարածումը:

Հյուրերը նշել են, որ Հայաստան կատարած հերթական այցի հիմնական նպատակը՝ ծրագրի իրականացման պրակտիկ արդյունքների դիտարկումն է՝ տեղեկացնելով, որ արդեն ևս երեք լաբորատորիաներ են բերվել, որոնցով կվերազինվեն անասնաբուժական ծառայություններ մատուցող տարածքային ստորաբաժանումները: Որպես հետագա համագործակցության զարգացման ուղղություն՝ նախարարն առաջարկել է քննարկել խաղողի ֆիլոքսերազերծ տնկարանային տնտեսությունների հիմնման համար ֆիլոքսերակայուն ամերիկյան սորտեր տրամադրելու հնարավորության հարցը: Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել երկուստեք հետաքրքրություններ կայացնող մի շարք այլ հարցերի շուրջ ևս:

### Գործարար կապերի հաստատում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է հնդկական «NEL group» և «YNG group» ընկերությունների տնօրեն Յաշոդա Նանդի Գուպտայի գլխավորած պատվիրակությանը: Հյուրերը Հայաստան են ժամանել այս տարվա փետրվարին նախարարի՝ Հնդկաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակում:

Հանդիպման սկզբում պատվիրակության ղեկավարը համառոտ ներկայացրել է իր գլխավորած ընկերությունների գործունեությունը՝ նշելով, որ այցի հիմնական նպատակը՝ Հայաստան հնդկական գյուղտեխնիկայի, մասնավորապես, տրակտորների ներկրման հնարավորության քննարկումն է, ինչպես նաև գինեգործության ոլորտում հայ մասնագետների հետ գործարար կապերի հաստատումը: «Մենք շատ ենք կարևորում Հնդկաստանի հետ գյուղատնտեսության ոլորտում հարաբերությունների ընդլայնումը, քանի որ ունենալով մեծ շուկա՝ այն լայն հնարավորություններ է բացում երկկողմ համագործակցության և Հնդկաստանում հայկական արտադրանքի ներկայացման համար»,-նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Դրական գնահատելով դեպի Հայաստան հնդկական տրակտորների ներկրման հնարավորությունը՝ նախարարը միաժամանակ ընդգծել է հայ գյուղատնտեսների համար գյուղտեխնիկայի գների մատչելիության և բարձր որակի ապահովման կարևորությունը: Որպես հնարավոր տարբերակ՝ հնդկական կողմն առաջարկել է հանրապետություն ներկրել տրակտորների համապատասխան արեգատները՝ տեղում հավաքումը կազմակերպելու նպատակով:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև գինեգործության ոլորտում հայ-հնդկական համագործակցությանը, որի շրջանակում նախատեսվում են հանդիպումներ մի շարք հայկական գինեգործական ընկերությունների ներկայացուցիչների հետ: Այս ուղղությամբ, համագործակցությունն ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով, նախարարն առաջարկել է կազմակերպել գինեգործական ցուցահանդեսներ՝ երկու երկրների շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելել է կարկտահարությունից տուժած Արմավիրի մարզի Տանձուտ, Արևիկ, Եղեգնուտ և Արտաշար համայնքներ:** Կառավարության ղեկավարը եղել է կարկտահարված դաշտերում, ծանոթացել տեղացած կարկուտի պատճառած վնասներին, զրուցել գյուղացիների հետ, լսել նրանց մտահոգությունները ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Վարչապետը հանձնարարել է Արմավիրի մարզում հնարավորինս սեղմ ժամկետներում տեղադրել լրացուցիչ հակակարկտային կայաններ: Գյուղացիների խնդրանքին ի պատասխան՝ Հովիկ Աբրահամյանը խոստացել է Կենտրոնական բանկի հետ քննարկել կարկտահարությունից տուժած գյուղացիական տնտեսությունների՝ բանկերին ունեցած վարկերի մարման հետաձգման հարցը:

Կառավարության ղեկավարը պատասխանել է նաև բնակիչներին հետաքրքրող մի շարք հարցերի:

\*\*\*

**Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են շահագրգիռ գերատեսչությունների և խաղող մթերող ձեռնարկությունների ղեկավարները:** Խորհրդակցության ընթացքում քննարկվել են ձեռնարկությունների գործունեությանը, առաջիկա ծրագրերին, արտահանման ծավալների վերականգնմանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև այս տարի խաղողի մթերումների կազմակերպմանը, առկա խնդիրներին:

Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարներին՝ հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված տնտեսական իրողությունները, շարունակել ձեռնարկությունների հետ քննարկումները՝ ոլորտի զարգացմանն ուղղված քայլեր մշակելու, նոր շուկաներ գտնելու ուղղությամբ, ինչպես նաև օժանդակել տնտեսվարողներին՝ առկա խնդիրները հաղթահարելու համար:

\*\*\*

**Կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում, որով գումար կհատկացվի Լոռու և Տավուշի մարզերին՝ առաջնահերթ մի շարք խնդիրների լուծման նպատակով:** Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը նշել է, որ այդ խնդիրները ՀՀ վարչապետին են ներկայացվել վերոնշյալ մարզեր մայիսի 4-ին նրա կատարած աշխատանքային այցի շրջանակում: Այսպիսով՝ կվերանորոգվեն Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի մանկապարտեզի շենքը, քաղաքի 3-րդ փողոցի, Նոր Միկրոշրջան N 4 բազմաբնակարան շենքի տանիքը: Նախարարի խոսքով՝ վարչապետի հանձնարարությամբ, ևս մի կարևոր հարց լուծում կստանա. գումար կհատկացվի Տավուշի մարզի Չորական համայնքի դպրոցի վթարային շենքի վերանորոգման նախագծա-նախա-հաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար, որպեսզի հաջորդ բյուջետային տարում համայնքն ունենա դպրոցի նոր շենք: Կկառուցվի Տավուշի Ջուջևան համայնքի ջրագիծը, որով ամբողջությամբ կլուծվի թաղամասի խմելու ջրի խնդիրը: Կասֆալտապատվեն նաև մարզի Ոսկեվան համայնքի ճանապարհները: Մեկ այլ որոշմամբ էլ գումար կհատկացվի Արագածոտնի մարզի Եղնիկ համայնքում կառուցվող ջրագծի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար: Հիմնավորման համաձայն՝ համայնքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգը գտնվում է անմխիթար վիճակում. ջրամատակարարումն իրականացվում է խմելու ջրի որակի պահանջներին չբավարարող ջրով: Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը ներառվել է սոցիալական աջակցություն ստացող համայնքների ցանկում: Նախարարի խոսքով՝ այս հարցը նույնպես քննարկվել է ՀՀ վարչապետի Տավուշի մարզ կատարած այցի ժամանակ: Կառավարության համապատասխան որոշման ընդունումը պայմանավորված է Նոյեմբերյան համայնքի բնակիչների կենսապայմանների բարելավման անհրաժեշտությամբ: Այսուհետ, համայնքի բնակիչներին կտրամադրվի սոցիալական աջակցություն՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ռոզգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման տեսքով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի ելույթը	Էջ 3
Ճերմերային տնտեսություն	Էջ 4
Մասնագետի խորհուրդը	Էջ 6



**ԾՐԱԳԻՐ**

**Պարենի անապահովության և թերսնուցման  
սվազեցման խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրներ, ներկայումս մեծ աշխատանքներ են տանում բնակչության՝ բավարար կենսամակարդակի իրավունքի իրականացման ուղղությամբ պարենի ապահովության ազգային քաղաքականության համատեքստում:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը՝ ՀՀ գյուղատնտեսության, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության նախարարությունների, քաղաքացիական հասարակության, կրթական հաստատությունների ներկայացուցիչների և ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՊՅԾ-ի հետ համատեղ, վերջերս անցկացրեց կլոր սեղան քննարկում՝ նոր մեկնարկած ծրագրի գործողությունների և նպատակների վերաբերյալ: «Կովկասի և Կենտրոնական Ասիայի որոշ երկրներում կարողությունների հզորացում՝ պարենի անվտանգության և սնուցման բարելավման ուղղությամբ» ծրագիրը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից: Շուրջ 6 միլիոն ԱՄՆ դոլլար արժողությամբ ծրագիրը, բացի Հայաստանի Հանրապետությունից, իրականացվում է նաև Կիրգիզիայում, Տաջիկստանում:



Նոր մեկնարկած ծրագիրը նախատեսում է պարենի ապահովման և սնուցման կառավարումը, սնուցման տեսանկյունից, սոցիալական պաշտպանությունը և սնուցման վերաբերյալ կրթությունը, ինչպես նաև առողջապահությունը ներառել պարենի անվտանգության և սնուցման ռազմավարության մեջ՝ ստեղծելով Պարենի անվտանգության և սնուցման ազգային հանձնաժողով և թարմացնելով ներկայումս գործող օրենսդրությունն ու քաղաքականությունը: Ծրագրի նպատակները համահունչ են «Կայուն զարգացման նպատակների» հետ, որոնք 2015 թ.ին ընդունվել են ՄԱԿ-ի անդամ-պետությունների կողմից և համապատասխանում են Սնուցման վերաբերյալ միջազգային կոնֆերանսից հետո երկրների ստանձնած պարտավորություններին:

Գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը, ներկա գտնվելով քննարկմանը, կարևորեց ծրագրի իրականացումը՝ սննդի անվտանգության և սոցիալապես անապահով խմբերի համար բավարար սնուցում ապահովելու տեսանկյունից: «Ծրագրային բոլոր գործողությունները կիրականացվեն այնպես, որպեսզի հեռավոր և սոցիալապես խոցելի համայնքների փոքր և միջին տնտեսությունները կարողանան օգտվել: Ծրագիրը կնպաստի աղքատության սվազեցմանը և անապահով համայնքների՝ նորմալ կենսակերպի ապահովմանը», - նշել է փոխնախարարը:

Եռամյա ծրագիրը կներառի կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ, որոնց կմասնակցեն քաղաքականության մշակմամբ զբաղվող մասնագետներ, կառավարության պաշտոնյաներ և այլ մասնագետներ: Ծրագիրը նպատակ ունի բարելավել պարենի ապահովության և սնուցման, սոցիալական պաշտպանության, կրթական և առողջապահական ազգային ծրագրերի և քաղաքականությունների միջուկորտային համակարգումը:

**Համայնքային խնդիրները լուծելի են**

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) կողմից Շիրակի մարզի Հոռոմ գյուղում նախատեսվում է իրականացնել խոշոր ծրագիր՝ շուրջ 315 հա վարելահողերի համար փակ և բաց համակարգով՝ ոռոգման ներհամայնքային ցանցի կառուցմամբ:

Ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 450 միլիոն դրամ է, որի 5%-ը ներդնելու է գյուղը: Ըստ Հոռոմի գյուղապետ Աշոտ Պասկեյանի՝ համայնքային ներդրման կեսն արդեն կատարվել է, մնում է իրականացնել մնացած գումարի ներդրումը:

Վերջերս Շիրակի մարզ էին այցելել ԳՉՄԳ-ի ներկայացուցիչները, ովքեր Հոռոմում հանդիպել են գյուղի ֆերմերների, կոոպերատիվի անդամների հետ

և քննարկել ծրագրի մանրամասները, լսել ֆերմերների կողմից ներկայացված առաջարկները, այդ թվում՝ պահեստային տնտեսության ստեղծման վերաբերյալ:

Այցելության շրջանակներում մարզի հյուրերը՝ դոկտոր Աբգալյանի Գաայան (ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության (FAO) խորհրդատու), Սամիր Բեժուրին (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի IFAD ծրագրի պատասխանատու), Մարիա Մուրադյան (մոնիտորինգի գնահատման և զարգացման համակարգման բաժնի



ղեկավար) հյուրընկալվել են նաև Շիրակի ԳԱՄԿ-ում, հանդիպել ԳԱՄԿ-ի տնօրեն Ջ. Ասլանյանին, ծանոթացել Շիրակի ԳԱՄԿ-ի աշխատանքներին, գործունեությանը: Պատվիրակույթ-

յան անդամները Շիրակի ԳԱՄԿ-ի տնօրենի հետ քննարկել են Հոռոմում իրականացվելիք ծրագրի, ինչպես նաև ֆերմերների կողմից բարձրացված հարցերի, մասնավորապես՝ պահեստային տնտեսության ստեղծման վերաբերյալ, արդյունավետությունը: Ջ. Ասլանյանը կարևորել է ծրագրի դերն ու նշանակությունը Հոռոմի վարելահողերի արդյունավետ օգտագործման, բերքատվության ցուցանիշների բարձրացման տեսանկյունից, ինչպես նաև, համաձայնելով հոռոմի ֆերմերների առաջարկի հետ՝ շեշտել պահեստային տնտեսության կազմակերպման կարևորությունը:

Շիրակի ԳԱՄԿ

**ՄԻՋՈՅԱՌՈՒՄ**

**Կենսաբազմազանության  
օրվան ընդառաջ**

Հայաստանի բնության պետական թանգարանում, ՀՀ բնապահպանության նախարարության և Բնության համաշխարհային հիմնադրամի համատեղ ջանքերով, նշվել է Կենսաբազմազանության միջազգային օրը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, WWF հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարեն Մանվելյանը, ՀՀ ԲՆ կից հասարակական, գիտատեխնիկական խորհուրդների անդամներ, լրագրողներ:

Նախարարը ողջունելով հյուրերին և կարևորելով օրվա խորհուրդը՝ մասնավորապես նշել է. «Կենսունակ էկոհամակարգերը և կայուն կենսաբազմազանությունը մարդկության գոյության կարևորագույն նախապայմաններից են, որոնք ընձեռում են հասարակության զարգացման և տնտեսական աճի լայն հնարավորություններ: Սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով, կենսառեսուրսների կառավարումը պետք է լինի կշռադատված և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը հասցվի նվազագույնի: Կենսաբազմազանության պաշտպանության հրատապությունն ընդգծելու նպատակով 1992-ի հունիսի 5-ին ՄԱԿ-ը ստորագրման համար բացել է «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիան, որն ընդունվել է 1993թ.: Այն աշխարհի ավելի քան 168 երկրների հետ վավերացրել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրները, որպես առաջնային խնդիրներ, դասվում են ազգային և պետական գերակայությունների շարքում: Մեր երկրի բացառիկ հարուստ կենսաբազմազանության պահպանության և պաշտպանության հարցերում աջակցում են միջազգային բնապահպանական հիմնադրամները, որոնց հետ համատեղ ջանքերի արդյունքում, մենք բազում ձեռքբերումներ, բայց և շատ անելիքներ ունենք»:

WWF հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարեն Մանվելյանը, իր հերթին կարևորելով օրվա խորհուրդն ու բարձր գնահատելով համատեղ ջանքերով կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործողությունները, միջոցառման մասնակիցներին է ներկայացրել Հայաստանի պահպանվող տարածքների և էկոտուրիզմի զարգացման հեռանկարներին նվիրված «Գիտակից Կովկաս» ֆիլմը:



ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության պետ, Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի ազգային համակարգող Գ. Մանուչարյանը ներկայացրել է Հայաստանի հարուստ կենսաբազմազանության պահպանմանն ուղղված աշխատանքները և հեռանկարային ծրագրերը: Միջոցառման մասնակիցները, թեմայի շուրջ շահագրգիռ քննարկումից հետո, դիտել են «Հայաստանի կենսաբազմազանությունը» խորագիրը կրող սկարների ցուցահանդեսը:

www.armenia.panda.org



ԵՆՈՒՅԹ

ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ



Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2015 թվականին նույնպես շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը:

2015 թվականին ճշտված պետական բյուջեով և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել էր 10 մլրդ 899.1 մլն դրամ: Նշված միջոցներն ուղղվել են՝ սպասարկման և զարգացման միջոցառումների իրականացմանը՝ 8 մլրդ 616.8 մլն դրամ, վարկային ծրագրերի համաֆինանսավորմանը՝ 513.2 մլն դրամ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ծրագրերի իրականացմանն է ուղղվել 1 մլրդ 769.1 մլն դրամ:

2015 թվականին, նախորդ տարվա նկատմամբ, գյուղատնտեսությունում գրանցվել են դրական տեղաշարժեր: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 1 տրիլիոն 2.2 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 11.7 %-ով:

2015 թվականի երկրի ՀՆԱ-ի 3.0 % հավելածի նպաստման 2.4 տոկոսային կեսը (80.0 %-ը) բաժին է ընկել գյուղատնտեսությանը:

ԲՈՒՍԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծության ճյուղում 2015 թ. համախառն արտադրանքի աճը կազմել է 15.2 %: Ցանքատարածությունները գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը 5.7 %-ով և կազմել 351.8 հազ. հա, վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը հասել է 78.8 %-ի՝ 2015թ. 74.4 %-ի դիմաց: Բուսաբուծության ճյուղում գրանցված դրական տեղաշարժերն արդյունք են իրականացված պետական աջակցության ծրագրերի, որոնցից հիմնականներն են՝ «ՀՀ 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման» ծրագիրը (654.8 մլն դրամ): Վերջինիս շրջանակներում ՌԴ-ից հանրապետություն է ներկրվել 1013.8 տոննա գարնանացանի գարու առաջին վերարտադրության, 59.2 տոննա առվույտի, 247.8 տոննա կորնզանի և 5.3 տոննա եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողից գնվել է 120 տոննա գարնանացանի գարու էլիտային վերարտադրության սերմացու: Սերմացուի մեկ կիլոգրամը հողօգտագործողներին հատկացվել է ձեռք բերված արժեքից 35-50 % ցածր գնով: 2016 թվականին սպասվող բերքի համար կարևոր նշանակություն կարող է ունենալ «ՀՀ 2010-2014 թվականների ցորենի սերմաբուծության և սերմարտադրության զարգացման» ծրագիրը (860.9 մլն դրամ), որի շրջանակներում, 2014 թվականին ծրագրում ընդգրկված շահառուներից հետ է վերադարձվել 505.2 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, ինչպես նաև «Գյումրիի սելեկցիոն կայանից» և շահառուներից ձեռք է բերվել ևս 2243.4 տոննա, իսկ Ռուսաստանի Դաշնությունից գնվել է 1509 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու (ընդամենը՝ 4257.6 տոննա): Սերմացուն, ՀՀ մարզպետարաններից ներկայացված պահանջարկը բավարարելու նպատակով, մատչելի պայմաններով տրամադրվել է մինչև 3 հեկտար հողատարածք ունեցող հողօգտագործողներին: Բարձր վերարտադրության սերմացուի արտադրության համար ՌԴ-ից գնվել է 40 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացու և հատկացվել 7 և ավելի հեկտար ջրովի վարելահող ունեցող սերմարտադրողներին:

«Հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիր:

Տարեկան ճշտված բյուջեն կազմել է 2 մլրդ 661.6 մլն և փաստացի ծախսը՝ 2 մլրդ 631.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 33.3 հազ. տոննա ազոտական, 1648.4 տոննա ֆոսֆորական և 564.8 տոննա կալիումական պարարտանյութեր, որոնք վաճառվել են շուկայականից 40-50 %-ով ցածր գներով: 2015 թվականի ընթացքում բաշխվել են նաև 2014 թվականի աշնանը չբաշխված ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը: Հաշվետու տարվա ընթացքում մարզերում իրացվել են շուրջ 32.7 հազ. տոննա ազոտական, 2361 տոննա ֆոսֆորական, 857 տոննա կալիումական պարարտանյութեր: Ամբողջությամբ բավարարվել է մարզերի պահանջարկը:

«Հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիր:

Նախատեսված է եղել 1 մլրդ 260.6 մլն դրամ, սակայն ճշտված բյուջեով գումար չի հատկացվել: Այն իրականացվել է նախորդ տարվա դիզելային վառելանյութի մնացորդի հաշվին: Ծրագրի շրջանակներում, հաշվետու տարվա ընթացքում, շուկայականից որոշակիորեն ցածր գներով մարզերում իրացվել է 3.2 մլն լիտր դիզելային վառելանյութ՝ 1 լիտրը 350 դրամ արժեքով (ներառյալ տեղափոխման ծախսերը):

«Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների» ծրագիր:

Ճշտված բյուջեն և փաստացի ծախսը կազմել է 58.9 մլն դրամ: Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝ սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակումներ, ինչպես նաև բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումներ: 2015 թվականի ընթացքում ստուգվել է գյուղատնտեսական մշակաբույսերի 15.9 հազ. տոննա սերմ, որից՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի՝ 9.0 հազ. տոննա:

«Բույսերի պաշտպանության միջոցառումների» ծրագիր:

Ճշտված բյուջեն կազմել է 150 մլն դրամ, իսկ ֆինանսավորումը՝ 89.2 մլն դրամ: Ծրագիրը կարևորվում է հանրապետությունում բուսաբուծության կայուն վիճակի ապահովման առումով: Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման համար, 2015 թվականին ձեռք է բերվել 7900 կգ վասատների դեմ պայքարի միջոց (ռոտենդիցիտ)՝ 70.3 մլն դրամ արժեքով, և ծրագրով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 2000 կգ պաշտպանության միջոց, որով պայքարի միջոցառումներ են իրականացվել 25.0 հազ. հեկտար վնասատուներով առավել վարակված վարելահողերում և բազմամյա տնկարկներում: 2015 թվականի գարնանը «Օկնոգինա» վնասատուի դեմ քիմիական պայքար է իրականացվել ՀՀ Արագածոտնի և Կոտայքի մարզերի 8 համայնքներում՝ շուրջ 404 հեկտարի վրա, որի համար համայնքներին անհատույց հատկացվել է 2014 թվականին ձեռքբերված «Կոպ» բույսերի պաշտպանության միջոց՝ 97 լիտր:

ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 407-Ն որոշմամբ՝ 2015 թվականի «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրում կատարվել է փոփոխություն, և ծրագրի միջոցներից 18.9 մլն դրամ տրամադրվել է «Հայաստանի Հանրապետությունում լոլիկի ակնտող ցեց և կարտոֆիլի ցեց վնասատուների մոնիթորինգի իրականացման նպատակով 2015 թվականի պետական աջակցության» ծրագրին: Նշված գումարով ՌԴ-ից ձեռք են բերել 3300 ֆերոմոնային թակարդներ և օժանդակ նյութեր: Թակարդները տեղադրվել են հանրապետության 254 համայնքների ավելի քան 10 հազ. հեկտար մորմագգի մշակաբույսերի մասիվ տարածքներում՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով: Ծրագրի իրականացման արդյունքում հանրապետությունում ստեղծվել է կայուն բուսաանիտարական վիճակ:

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների» ծրագիր

Ճշտված բյուջեն և ֆինանսավորումը կազմել է 70.2 մլն դրամ: Ծրագրով ավելի քան 86 հազ. հա հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա իրականացվել են ագրոքիմիական

դաշտային հետազոտություններ: 171 համայնքների հանձնվել են ագրոքիմիական քարտեզներ ու մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր, 720 նմուշ պարարտանյութերի համար կատարվել է ավելի քան 3600 փորձաքննություն: Մշակված ագրոքիմիական քարտեզների և պարարտացման երաշխավորագրերի օգտագործումը հնարավորություն է տալիս կոնկրետ պայմաններին և ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան կիրառել պարարտացում:

ԱՆԱՍՆԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծության ճյուղում 2015 թ. գրանցվել է 6.1 % տնտեսական աճ: 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի 1.9, մանր եղջերավորների՝ 4.3, խոզերի՝ 22.8 % աճ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիր

Ճշտված բյուջեն կազմել է 1 մլրդ 188.6 մլն դրամ, իսկ ֆինանսավորումը՝ 1 մլրդ 162.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ 8.5 մլն միջոցառում: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների նկատմամբ իրականացվել են 2 (բրուցելյոզ և տուբերկուլյոզ) ախտորոշիչ և 9 (սիբիրախտ, պաստերելյոզ, դաբաղ, խշխշան պալար, խոզերի դասական ժանտախտ, թռչունների կեղծ ժանտախտ, մեղրուների վարրոատոզ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ) կանխարգելիչ միջոցառումներ: Կատարված միջոցառումների արդյունքում՝ հանրապետությունում ապահովվել է կայուն անասնահամաճարակային վիճակ:

«Տավարաբուծության զարգացման ծրագիր» (791.1 մլն դրամ):

2015 թվականին ծրագրի շրջանակներում Ավստրիայի Հանրապետությունից ներկրվել են 257 գլուխ հուլտին և շվից ցեղերի տոհմային երինջներ, որոնք հատկացվել են թվով 12 տնտեսավարող սուբյեկտի: Երինջների երկրորդ խմբաքանակից (453 գլուխ) 2016 թվականին ներկրվել է 255-ը: Մի շարք ընկերություններում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 7-8 հազար կգ կաթ, որը 3-4 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Անասնաբուծության զարգացման համար առանձնակի կարևորվում են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային (առաջին և երկրորդ) ծրագրերը:

2015 թվականին պետական բյուջեից, որպես համաֆինանսավորում, ճշտված բյուջեով նախատեսվել է 513.2 մլն դրամ, փաստացի ծախսվել է 428.2 մլն դրամ (ծրագրի ընդհանուր ներդրումները հաշվետու տարում կազմել են 2 մլրդ 464.8 մլն դրամ):

Ծրագրի առանցքային դրույթներից է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և դրանց գործունեությանը նպաստելու միջոցով, մրցունակ անասնապահության զարգացման համար կարևոր նախադրյալ հանդիսացող բնական կերահանդակների, մասնավորապես՝ արոտների համակարգված



**ԵԼՈՒՅԹ**

**ՀՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ**

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ**

3

**ԾԱԽՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

օգտագործման, դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավման և ընդլայնման ապահովումը, անասնապահական մթերքների արտադրողից մինչև սպառող շղթայի օղակներում ներկայումս առկա խնդիրների համակարգված լուծումը, արդյունքում անասնապահության ճյուղում ծախսերի կրճատումը, առավել բարձր ավելացված արժեքի ստացումը և անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացումը: Մասնավորապես՝ առաջին և երկրորդ ծրագրերի «Համայնքների արտադարյան և անասնապահության կառավարման համակարգ բաղադրիչի» շրջանակներում, 2011 թվականից ի վեր ՀՀ 8 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Կոտայք, Վայոց ձոր, Սյունիք) 136 համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- 133 համայնքում հիմնադրվել են «Արտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ,
- 97 համայնքի արտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 835 միավոր գյուղատնտեսական, այդ թվում՝ 189 անիվավոր տրակտոր:
- 80 համայնքում արտադարյան ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (կառուցվել է 189 կմ ջրագիծ, տեղակայ-

«Գյուղական խորհրդատվական ծառայությունների» ծրագիր: Ճշտված պետական բյուջեն և փաստացի ծախսերը կազմել են 395.7 մլն դրամ: Հատկացված գումարների հաշվին խորհրդատվական ծառայություններ մատուցող ԳԱՄԿ-երի և ԳԱՀԿ-ի կողմից կազմակերպվել են շուրջ 1100 սեմինար, 850 դաշտային ուսուցում և 150 փորձագուցադրական աշխատանքներ, լրատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում, 94 ռադիոհեռուստահաղորդում, 447 անուն տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում՝ 128 հազ. տպաքանակով, 156 համար թերթերի թողարկում՝ 207.5 հազ. տպաքանակով: Հատկացված բյուջետային միջոցների 83.4 %-ը կամ 330.1 մլն դրամն աշխատավարձի ֆոնդն է:

«Անտառապահական և ծառայությունների» ծրագիր: Ֆինանսավորումը կազմել է 1 մլրդ 201.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 344.2 հազ. հեկտար անտառային տարածքների պահպանություն: Պետական բյուջեով նախատեսված միջոցներն ամբողջությամբ ուղղվել են անտառային տնտեսության աշխատողների աշխատավարձի ապահովմանը: 2015 թ. «Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից, սեփական եկամուտների հաշվին, իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում՝ 14.0 հա, լրացում՝ 73 հա և խնամք՝ 124 հա տարածքի վրա:



վել է 244 հատ խմոց), իսկ 11 համայնքում՝ գտնվում են իրականացման փուլում (42 կմ ջրագիծ, 29 հատ խմոց), համայնքի շուրջ 218 հա արոտներում ավարտվել են դեզարդացված տարածքների վերականգնողական աշխատանքները, իսկ 24 համայնքում իրականացվում է գյուղամերձ դեզարդացված արոտների ուսումնասիրություն: Ծրագրի իրականացման արդյունքում գրանցվել է կաթնատվության ավելացում՝ շուրջ 26.3 %, քաշածի ավելացում՝ շուրջ 18.0 %:

Վարկային ծրագիրը շարունակվում է: Գյուղատնտեսությունում վարկերի մատչելիության բարձրացմանն ուղղված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուսիդավորման» ծրագիրը: Ճշտված բյուջեն և ֆինանսավորումը կազմել է 1 մլրդ 163.0 մլն դրամ: 2011 թվականից մեկնարկված այս ծրագրով հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվում են մատչելի տոկոսադրույքով (14 %) վարկեր, և սկսած 2015 թվականից սուբսիդավորվում է տոկոսադրույքի 6 տոկոսային կեսը: Ծրագրի մեկնարկից մինչև 2016 թվականի առաջին եռամսյակի ավարտն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 85.3 մլրդ դրամ ընդհանուր գումարով, շուրջ 100.3 հազ. միավոր վարկ, սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 3 մլրդ 816.3 մլն դրամ: Միայն 2015 թվականին տրամադրվել է 15.2 մլրդ դրամ, 21.4 հազ. միավոր վարկ: 2011-2015 թվականներին և ընթացիկ տարվա անցած ամիսներին գյուղատնտեսության ոլորտում դրական տեղաշարժերն արդյունք են նաև մատչելի վարկային ներդրումների:

100 հա տարածքում իրականացվել են կոնդաշիվային վերածի օժանդակման աշխատանքներ: «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Հայաստան» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով, «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են 61.2 հա տարածքի անտառապատման և 37.2 հա լրացման աշխատանքներ:

«Անտառային պետական մոնիտորինգի իրականացման» ծրագիր: Ֆինանսավորումը կազմել է 54.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են անտառների պահպանության, անտառապաշտպանության, հատատեղերի, հակահրդեհային, կլոր անտառային մթերման և իրականացման կանոնակարգի ուղղությամբ ուսումնասիրություններ և դիտարկումներ՝ շուրջ 370 հազ. հեկտար անտառներում: Արձանագրվել է, ընդհանուր թվով, 466 հատ ապօրինի հատված ծառերի կոնդեր: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները:

Եզրափակելով՝ հարկ եմ համարում նշել, որ ՀՀ պետական բյուջեով նախարարության համար նախատեսված արդյունքային և ոչ ֆինանսական ցուցանիշներն ամբողջությամբ կատարվել են: ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացված միջոցներից պետական գնումների մասով տնտեսվել է 135.8 մլն դրամ: Նշվածի հետ մեկտեղ՝ գյուղատնտեսությունում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջիկայում՝ բյուջետային և այլ ծրագրերի իրականացմամբ, իրենց աստիճանական լուծումներն են պահանջում:

*ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*

**ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՅՈՒՂԱՏՆՆԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԼԻՍ Է ԻՐ ՊՏՈՒՂՆԵՐԸ**

Կոտայքի մարզի Ակունք համայնքի տարածքում գործող բազմաճյուղ ֆերմերային տնտեսությունը, որը ղեկավարում է Անուշավան Յուզեֆյանը, ձևավորվել է դեռևս 1990 թ.-ին: Արմատներով Գարդմանի վերին Զարհատ ավանից է Անուշավան Յուզեֆյանը, ով Գետաշենի տարածաշրջանից բերելով ազնվամորու 25 կտրոններ՝ դրանք բազմացրեց Ակունքի տնամերձ հողատարածքում: Սրանք ֆերմերային տնտեսության ստեղծման առաջին քայլերն էին:

Ազնվամորին սկսեցին բազմացնել նաև Յատիսի փեշերին սփռված սեփականաշնորհված հողատարածքներում: Այսօր արդեն ազնվամորու ցանքատարածքները հասնում են 2 հեկտարի: Այն հիմնականում մշակում են լարային համակարգով: Յիմնել են նաև ծիրանենու, խնձորենու, սալորենու, տխլենու այգիներ: Աճեցնում են նաև վայրի և մշակովի հոն: «Այգիները հիմնել ենք մելիորացված, բարելավված հողատարածքների վրա: Աշխատանքներին աջակցել է գյուղապետարանը, առանց որի, նման առաջընթաց չէինք կարող ունենալ», - պատմում է ֆերմերը: Նախատեսվել են կառուցել սառնարանային տնտեսություն, որտեղ պետք է պահպանվի միրգը: Ազնվամորու սառեցման նպատակով՝ նախատեսվել են ձեռք բերել խորը սառեցման սարքավորում: Յատիսի լանջերին մելիորացվել է ևս 4 հա հողատարածք, որի ոռոգման խնդրի կարգավորումից հետո կհիմնեն պնդուկի (տխլենի) այգի: Առկա են նաև տնկանյութի ձեռք բերման խնդիրը: Ֆերմերի նախաձեռնությամբ կառուցվել է մեքենայացված անասնապահական ֆերմա, որտեղ բուծվում են շվից և կովկասյան գորշ ցեղի կենդանիներ: Տնտեսությունում իրականացնում են նաև արհեստական սերմնավորման աշխատանքներ: Չարգացնում են անասնապահության և մատու և կաթնատու ուղղությունները: Դեռևս երկու տարին չբոլորած բուման ցիլկն ապահովում է բավականին մեծ քաշ: Կովերի տարեկան միջին կաթնատվությունը կազմում է 3000 լ: Կաթն առայժմ հանձնում են վերամշակող ընկերություններին: Կենդանիներին անհրաժեշտ հյութալի կերերն արտադրում են ընկերության հողատարածքներում: Կառուցել են կերախոհանոց, որտեղ պահանջվող բաղադրատոմսով պատրաստվում է որակյալ կեր: «Լավագույն կերակրման արդյունքում՝ ոչ միայն բարձրանում է կենդանիների մթերատվությունը, այլև բարելավվում է դրանց ֆիզիկական վիճակը: Անասնապահության զարգացման հեռանկարը պայմանավորված է կերի կայուն բազայի ստեղծման հետ: Ցանքատարածքների ավելացման խնդիր ունենք», - նշում է Ա. Յուզեֆյանը: Յարուստ են նաև անասնապահության բնագավառին առնչվող հեռանկարային ծրագրերը: Կարևորում են նաև կաթի վերամշակման արտադրամասի ստեղծումը: Արտադրվում է մանրեագերծ կաթ. քանի որ կիթը մեքենայացված է, ստեղծված են սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմաններ: Իսկ անթափոն արտադրության կազմակերպման նպատակով, կստեղծեն խոզաբուծական ֆերմերային տնտեսություն:

Անուշավան Յուզեֆյանը մասնագիտությամբ տնտեսագետ է և իր գիտելիքները ներդրում է՝ ի նպաստ ֆերմերային տնտեսության զարգացմանն ու բարգավաճմանը: Նա միաժամանակ անդամակցում է «Ակունք համայնքի արտօգտագործողների սպառողական կոոպերատիվին»: «Կոոպերատիվի գործունեության հեռանկարը ողջունելի է: Գյուղի ամենամեծ հիմնախնդիրը տեխնիկայի նորացումն է, որն էլ ապահովում է կոոպերատիվը: Կոոպերացիան Յայաստանում անպայման հաջող ընթացք կունենա», - եզրահանգում է ֆերմերը: Կոոպերատիվի ծրագրերից մեկն էլ վերաբերում է արոտավայրերի բարելավմանը, ջրարբիացմանը, որը կոոպերացիայի գերխնդիրն է:

Բազմաճյուղ տնտեսությունում գյուղատնտեսական բոլոր աշխատանքները դրված են գիտական հենքի վրա, ինչն էլ նպաստում է տնտեսության արդյունավետության բարձրացմանը: Տնտեսությունն ապահովում է շուրջ 15 աշխատատեղ, որոնց թիվը ավելանում է սեզոնային աշխատանքների ընթացքում:

*Նելլի Սահակյան*



ԿՐԹԱԿԱՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՔ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԿՈՒՐՍԵՐԻ ՊԱՏՎԻՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի բակալավրիատի 30, մագիստրատուրայի 10 և Ի-Վ-Էն գինու ակադեմիայի 14 շրջանավարտների պարվին կազմակերպված ավարտական արարողությանը մասնակցում էին ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Մաթիաս Քիսլերը, ԱՄՆ փոխդեսպան Քլարկ Փրայսը, ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Սարգսյանը, Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքոլսը, Գայզենհայմի համալսարանի պրոֆեսոր Յոն Հանֆը:



ՀԱԱՀ ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արշալույս Թարվերդյանը, բացելով հանդիսավոր արարողությունը, շեշտեց ԱՌԻԿ-ի դերը՝ որպես համալսարանի մյուս ֆակուլտետների և երկրի ամբողջ կրթական համակարգի համար յուրահատուկ կրթական փորձարարական լաբորատորիայի: «Իրենց մասնագիտական պատրաստվածությամբ ԱՌԻԿ-ի շրջանավարտները մեծ պահանջարկ ունեն ոչ միայն Հայաստանում և տարածաշրջանում, այլև՝ ԱՊՀ երկրներում և Եվրոպայում», - նշել է պարոն Թարվերդյանը: Անդրադառնալով երկու տարի առաջ հիմնադրված Գինու ակադեմիային, որն իր առաջին շրջանավարտներն է տալիս՝ պարոն Թարվերդյանը շնորհակալություն է հայտնել համալսարանի համեմատաբար նոր գործընկեր Գերմանիայի Գայզենհայմի համալսարանին, որի հետ օրերս կնքվել է համագործակցության հուշագիր, ինչպես նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությանը (GIZ)՝ գինու ակադեմիային ցուցաբերվող տեխնիկական և ֆինանսական աջակցության համար: Նա նաև հավաստիացրել է, որ համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունն իր նորացվող հնարավորություններով առաջիկայում կծառայի որպես Գինու ակադեմիայի արտադրական բազա:

«Ինձ համար հուզիչ պահ է, քանզի շատ լավ հիշում եմ, թե 17 տարի առաջ պարոն Թարվերդյանի հետ ինչպես սկսեցինք ձևավորել այս կենտրոնը: Դրանք Հայաստանում միջազգային կրթական ծրագիր իրականացնելու առաջին փորձերն էին՝ մեր երկրի համար խիստ կարևոր ագրոտորություն: Շնորհակալություն հայտնելով ԱՄՆ գործընկերներին՝ նախարարը խոսեց նաև Գինու ակադեմիայի մասին: Նա շնորհակալություն հայտնեց գերմանացի գործընկերներին, որոնց վերջին տարիների աջակցությունը նոր ուղի է բացում մեր երկրի համար այն իմաստով, որ Գինու ակադեմիան ավարտող մասնագետները կկարողանան միջազգային շուկա դուրս բերել հայաստանյան շատ կարևոր արտադրատեսակներ: «Ունենալ ներկա պահանջներին համապատասխանող մասնագետներ, նշանակում է՝ ժողովրդին վերադարձնել հազարավոր տարիների հիշողությունը, որովհետև գինին ոչ միայն արտադրանք է, այլ նախ և առաջ՝ մշակույթ, աշխարհընկալում», - նշել է ՀՀ կրթության

և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը: Նա շրջանավարտներին կոչ է արել հանգիստ, հստակ քայլերով և սխալվելու իրավունքով շարժվել առաջ՝ օգտագործելով իրենց ստացած «լավագույն կրթության» ընձեռած հնարավորությունները: Շրջանավարտներին ջերմորեն ողջունել ու շնորհավորել են նաև գյուղատնտեսության փոխնախարար Ռ. Մակարյանը, դեսպան Քիսլերը, փոխդեսպան Փրայսը, ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Սարգսյանը, պրոֆ. Նիքոլսը, պրոֆ. Հանֆը, ԱՌԻԿ-ի տնօրեն, Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի ասոցիատիվ պրոֆեսոր Վարդան Ուռուտյանը, ԱՌԻԿ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերը ներկայացնող շրջանավարտներ Վահե Քեշիշյանը և Գայանե Պետրոսյանը, ինչպես նաև Գինու ակադեմիայի շրջանավարտ Մարիամ Սաղաթելյանը:

ԱՌԻԿ-ի շրջանավարտներին ՀԱԱՀ դիպլոմներ և Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի ավարտական հավաստագրեր, ինչպես նաև Գինու ակադեմիայի շրջանավարտներին Գայզենհայմի համալսարանի ավարտական հավաստագրեր հանձնեցին Սամվել Սարգսյանը, Վարդան Ուռուտյանը, Յոն Հանֆը, Քլարկ Փրայսը և Ջոն Նիքոլսը: Պարոն Սարգսյանը, մասնավորապես, շրջանավարտներին դիմեց թե որպես հոգաբարձուների խորհրդի նախագահ, թե որպես համալսարանի շրջանավարտ, և թե որպես տնտեսական գործիչ շեշտելով. «Հիշեք, հաջողությունը միշտ էլ շատ մոտ է: Պարզապես պետք է այն տեսնել, շատ աշխատել հասնելու համար, իսկ հասնելուց հետո էլ կարողանալ այդ հաջողությունը դարձնել հաղթանակ»: Իսկ Վարդան Ուռուտյանի «մենք քիչ ենք, բայց մեզ կոչում են Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն» խոսքերը ոգևորության այլք բարձրացրեցին դահլիճում: Պարոն Ուռուտյանը շեշտադրեց շարունակական կրթության, մշտապես կատարելագործվելու անհրաժեշտությունը:

Վերջում Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում, շրջանավարտների պատվին տեղի ունեցավ ընդունելություն, որին մասնակցել են շրջանավարտների ծնողները, դասախոսները, ամերիկացի և գերմանացի գործընկերները:

Սոս Ավետիսյան  
ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն

ՀԱՍՏՆՔԱՅԻՆ

ՀՈՂԸ ՆԱԵՎ ... ՀԱՅՐԵՆԻՔ Է

Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 960 հա վարելահողերը գրեթե ամբողջությամբ մշակվում են: Գյուղապետ Վանիկ Զարությունյանի կարծիքով՝ գյուղացին, եթե տեսնում և ճաշակում է իր ստեղծած կյուրակական բարիքների արդյունքը, կառուցում է հողից: Պրն Զարությունյանը կարևորում է նաև գյուղմթերքների իրացման շուկայի առկայությունն ու գների կարգավորումը:

«Հողը պարզապես քարքարոտ, չմշակված տարածք է, որը որոշակի չափեր ու սահմաններ ունի: Այն նախնառաջ բարիքների ստեղծման աղբյուր է: Հողը պետք է կարողանալ մշակել: Իսկ դա նվիրում է պահանջում: Պետք է սիրել հողը», - ասում է համայնքի ղեկավարը: Գանձակցիներն ունեն այդ նվիրումը: Գյուղապետի կարծիքով՝ դրա վկայությունը նախորդ 25 տարիներն էին, երբ չնայած առկա բազմաթիվ դժվարություններին, գյուղացիներն, այնուամենայնիվ, մշակում էին հողը:

Գանձակում առավել մեծ արդյունավետություն է ապահովում կարտոֆիլի մշակությունը: Այստեղ ավանդաբար զբաղվում են կարտոֆիլաբուծությամբ, ինչի արդյունքում արդեն լիարժեքորեն տիրապետում են այս մշակաբույսի մշակության տեխնոլոգիային, մշակման նրբություններին և առանձնահատկություններին: Տնկում են կարտոֆիլի բարձր բերքատու սորտեր, որոնք անընդհատ նորացվում են: Գյուղապետի տեղեկացմամբ, 2013թ. գյուղում արտադրված կարտոֆիլն ամբողջությամբ, գյուղացու համար նպաստավոր գներով, իրացվել է: Բերքի հիմնական մասը արտահանվել է Վրաստան և Իրաք: Սակայն վերջին երկու տարիներին կրկին նկատվել են իրացման դժվարություններ: Պրն Զարությունյանի կարծիքով, կարևոր է ոչ միայն արտահանման խթանումը, արտաքին շուկաների հայտնաբերումը, այլև՝ ներքին շուկայում գների գոյացման կառավարումը: «Առաջին հերթին պետք է կարգավորել շուկայի խնդիրը: Իսկ վաճառքը պետք է իրականացնեն ոչ թե վերավաճառողները, այլ՝ հենց իրենք՝ կարտոֆիլ արտադրողները, որպեսզի գները մատչելի լինեն: Այդպիսով՝ կպաշտպանվեն նաև սպառողի շահերը, որին կառաջարկվի թե՛ մատչելի, և թե՛ որակյալ կարտոֆիլ», - նշում է գյուղապետը:

Ինչ վերաբերում է գների կարգավորմանը, ապա գյուղապետի կարծիքով, պե-



տությունն այստեղ իր դերակատարությունը պետք է ունենա: «Ջարակավոր է անել հնարավորը, որպեսզի չտուժի գյուղացին. նա առանց այդ էլ, թույլ է ու խոցելի: Այլապես շահում են վերավաճառողները՝ ստանալով գերշահույթ: Այդ երևույթը պետք է բացառել», - հավելում է գյուղապետը: Ի դեպ, նախատեսել են Երևանում բացել Գավառի կարտոֆիլի իրացման ֆիրմային խանութ, քանի որ վերջինիս պահանջարկը մեծ է՝ հատկապես մայրաքաղաքում: Այս տարի Գանձակում տնկել են 250 հա կարտոֆիլ, որը նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 30 հա-ով:

Գանձակում բուսաբուծական զարգացած ճյուղերից մեկն էլ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն է, որի ցանքատարածքները տարեցտարի ավելանում են: Ընթացիկ տարում կատարվել է 130 հա ցորենի ցանք, որը 50 հա-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Գարու ցանքատարածքները, որոնք կազմում են 350 հա, 2015թ.-ի ցուցանիշը գերազանցում են 20 հա-ով: Շուրջ 100 հա-ով ավելացել է աշնանացանը, այն 160 հա է: Չարգացած անասնաբուծություն ունեցող Գանձակում զգալի տարածքներ են զբաղեցնում կերային մշակաբույսերի ցանքատարածքները, ցանվել է 50 հա առվույտ (այն ավելացել է 10 հա-ով), ինչպես նաև՝ կորկան: Ըստ նախնական հաշվարկների՝ մշակովի հողատարածքներն ավելացել են 15-20 %-ով: Անասնաբուծության զարգացմանը զուգընթաց, գյուղում արդեն առկա է կաթի վերամշակման արտադրամասի հիմնման անհրաժեշտություն: «Ցանկալի է, որպեսզի կաթը վերամշակվի տեղում, այդ դեպքում արտադրական շղթան՝ ֆերմայից մինչև շուկա, կլինի ամբողջական: Կաթի առկա քանակությունը հնարավորություն կտա թողարկել այնքան արտադրանք, որ հնարավոր լինի նաև արտահանել», - նշում է գյուղապետը:

Գանձակում կարևոր է նաև օրգանիկ գյուղատնտեսության զարգացումը, քանի որ բնապահպանորեն մաքուր գյուղմթերքի պահանջարկն այսօր մեծ է թե՛ ներքին, և թե՛ արտաքին շուկաներում: Բացի այդ, հնարավոր կլինի որոշակիացնել և կառավարել կաթի մթերման գինը, այն առայժմ 120 դրամ է, իսկ ամռան ամիսներին սպասվում է գնի իջեցում: Այն ձեռնտու է գյուղացուն, քանի որ գյուղատնտեսական կենդանիները 7-8 ամիս գտնվում են մուրային պահվածքում և այդ ամիսներին սնվում են կուտակված չոր և հյութալի կերերով: Գանձակում սիրով մշակում են նաև տնամերձ հողատարածքները, որից ստացված բերքը բավականացնում է հիմնականում իրենց ընտանիքների կարիքների բավարարմանը: Հողը ոչ միայն մշակված հողատարածք է, արոտավայր կամ խոտհարք, որը որոշակի չափեր ու սահմաններ ունի, հողը նաև հայրենիք է:

Նելլի Սահակյան



**ԿՐԹԱԿԱՆ**


**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝  
ԳԱՅՋԵՆՀԱՅՄԻ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ**

Օրերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանը համագործակցության և բարեկամության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր ստորագրեց Գերմանիայի Գայգենհայմի համալսարանի հետ: Հայկական կողմից հուշագիրը ստորագրեցին ՀԱԱՀ ռեկտոր, ԳԱԱ ակադեմիկոս Արշալույս Թարվերդյանը և ԱԳՄԿ (ICARE) հիմնադրամի տնօրեն, Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի ասոցիատիվ պրոֆեսոր Վարդան Ուռուտյանը, իսկ գերմանական կողմից՝ Գայգենհայմի համալսարանի նախագահ, պրոֆ. Հանս Շուլցի ստորագրությանն ավելացվեց այդ համալսարանի գիտական տնտեսագիտության ծրագրի ղեկավար, պրոֆ. Յոն Հանֆի ստորագրությունը:

Հուշագրի ստորագրման արարողության մասնակիցների թվում էին

Գայգենհայմի համալսարանի արտաքին կապերի բաժնի ղեկավար Սոնյա Թայլմանը և Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքոլզը: Ըստ հուշագրի՝ երկու համալսարանները պարտավորվում են զարգացնել և ամրապնդել փոխադարձ աջակցությունը «Գինեգործություն և խաղողագործություն», «Գինեգործություն և գինու բիզնես», «Միջազգային գինու բիզնես» առարկաների գծով, ուսանողների համար ապահովել արտերկրում սովորելու հնարավորություն և իրականացնել դասախոսների փոխանակում, գինեգործությանն առնչող համատեղ հետազոտական ծրագրեր, կազմակերպել համապատասխան ուսումնագիտական և վերապատրաստման ուղղվածություն ունեցող խորհրդաժողովներ և սեմինարներ, ինչպես նաև իրականացնել փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այլ աշխատանքներ:

Պրոֆ. Թարվերդյանը և պրոֆ. Հանս-Ֆրեդ Բարթոլ գնահատեցին միջազգային գործընկերության ակնկալվող դերա-



կատարությունը երկու համալսարանների համար: Ընդ որում, հուշագրի ստորագրման արդեն նախորդել են կարևոր աշխատանքներ, որոնք նոր դրական զարգացումներ են նախանշում ոչ միայն մեր համալսարանի, այլև առհասարակ հանրապետության գիտական արդյունաբերության ոլորտում:

Լավագույն օրինակներն են ՀԱԱՀ 3 ուսանողները, ովքեր ուսումը շարունակում են Գայգենհայմում, ինչպես նաև ՀԱԱՀ-ի և ԱԳՄԿ (ICARE) հիմնադրամի Ի-Վի-Էն գինու ակադեմիան, որն այսօր տալիս է իր առաջին շրջանավարտները:

Սոս Ավետիսյան

**ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

**ԿԱՐՏՈՖԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՄ**

**ՖԻՏՈՑՏՈՐՈՂ**



Հարուցիչը սունկ է: Կարտոֆիլի ամենատարածված ու մասսակար հիվանդություններից է: Հաճախ, առանձին տնտեսություններում, երբեմն՝ ամբողջ հանրապետությունում, հիվանդության պատճառով կարտոֆիլի բերքը նվազում է 50-70 %-ով: Կորուստները հատկապես զգալի են խոնավ կլիմա ունեցող շրջաններում: Հիվանդությունն արտահայտվում է տերևների և պալարների վրա: Վեգետացիայի ընթացքում, սովորաբար, կարտոֆիլի ծաղկման փուլի սկզբում, տերևների եզրերին երևում են բավականին խոշոր, մուգ-գորշավուն բծեր: Տերևի հակառակ երեսին, բժի եզրով, առաջանում է սպիտակ, ալյուրման փառ: Վարակված տերևներն արագորեն սևանում, չորանում, մահանում են: Բույսն այրված տեսք է ստանում:

Պալարների վրա նկատվում են գորշ կամ արճճանոխրավուն, թեթև սեղմված բծեր, որոնց տակ հյուսվածքը նույնպես գորշ է և ամուր: Գորշացումը հյուսվածքի խորքում տարածվում է անհավասարաչափ: Պահպանման ժամանակ այդպիսի պալարների վրա զարգանում է չոր փտումը: Դաշտում ֆիտոֆտորոզը զարգանում է միայն օդի բարձր հարաբերական խոնավության (75 %-ից ոչ ցածր) կամ ջրի կաթիլի առկայությամբ: Առանձնապես հիվանդության հարուցիչ սնկի զարգացման համար նպաստավոր է ամռան երկրորդ կեսը, երբ ցերեկը 20-22 °C է, գիշերը՝ 10-12 °C: Յողը և մառա-

խողը նպաստում են նոր վարակի տարածմանը: Բույսի հասակը այդ ժամանակ նույնպես նպաստավոր է: Հիվանդությունը նկատվում է հուլիս-օգոստոս ամիսներին: Հիվանդության սկզբնաղբյուրը հիվանդ պալարներն են: Ուժեղ վարակված պալարներն ընդհանրապես չեն ծուլ: Հիվանդ պալարները տալիս են հիվանդ ծիլեր, և այդ եզակի օջախներից սունկը հետագայում տարածվում է: Ֆիտոֆտորոզով վարակվում են մշակվող բոլոր սորտերը: Հուլանդական սորտերը միջակ վարակվողներ են: Հանրապետությունում, հատկապես Լոռու մարզում, ֆիտոֆտորոզը համարյա ամեն տարի ուժեղ է զարգանում: Սակայն, վերջին տարիներին այն զգալի մաս է պատճառում նաև Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի մարզերում: Վնասը համեմատաբար փոքր է՝ Այունիքի, Վայոց ձորի, Արագածոտնի և Շիրակի մարզերում:

**ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Տնկել միայն առողջ պալարներ, կիրառել ցանքաշրջանառություն, պարարտացնել հանքային և օրգանական պարարտանյութերով /հատկապես՝ կալիումական/, բույլիցը կատարել ժամանակին և խնամքով, ֆիտոֆտորոզով ուժեղ վարակված դաշտերում, բերքահավաքից 4-6 օր առաջ, հնձել կարտոֆիլի փրերը և հեռացնել դաշտից, բերքահավաքը, ըստ հնարավորության, կատարել չոր եղանակին՝ ընտրելով և հեռացնելով ֆիտոֆտորոզով հիվանդ պալարները, իսկ նախքան պահեստավորելը, տնկանյութը չորացնել: Վեգետացիայի ընթացքում սրսկել 1-3 անգամ, ըստ որում, առաջինը՝ նախազգուշական, անալոգիկ կարտոֆիլի ծաղկման փուլի սկզբում, հաջորդ սրսկումները /անհրաժեշտության դեպքում/ կատարել 10-14 օր ընդմիջումներով՝ ծախսելով հեկտարին 500-600 լ աշխատանքային հեղուկ: Սրսկումները կատարել հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով, փոխնիփոխ՝ 1% Բորդոյան հեղուկ, Ռիդոմիլ ՄՑ-72, Ռիդոմիլ-Գոլդ 68՝ 2.5 կգ/հա նորմայով, Անտրակոլ՝ 2 կգ/հա, Ակրոբատ ՄՑ՝ 2 կգ/հա,

Կուպրոքսատ՝ 5 կգ/հա, Տատու՝ 3 լ/հա, Կուրգատ՝ 2 կգ/հա և այլն: Վերը նշված միջոցառումները համատեղելի են կոլորադայի բզեզի դեմ առաջարկվող միջատասպանների հետ:

**ՄԱԿՐՈՍԴՈՐԻՈՂ**



Հարուցիչը սունկ է: Տերևների վրա առաջանում են չոր, մուգ շագանակագույն, կլորավուն բծեր: Սկզբում բծերն անկանոն են՝ ցրված տերևի մակերեսին, ապա մեծանում են՝ ընդգրկելով տերևի մակերեսի կեսից ավելին: Պալարները վարակվում են հիմնականում բերքահավաքի ժամանակ, երբ կեղևը մասսաված է: Պալարի վրա առաջանում են քիչ սեղմված, մուգ գույնի, համարյա սև, թույլ փառով պատված բծեր:

Վարակված պալարների մեջ թափանցում են նաև այլ միկրոօրգանիզմներ, և պալարները փտում են: Երբեմն հիվանդությունը շփոթվում է ֆիտոֆտորոզի հետ, սակայն չոր բծավորությունը կամ մակրոսպորիոզը հանդես է գալիս հունիսի կեսերին՝ ծաղկումից 15-20 օր առաջ և զարգանում ամբողջ վեգետացիայի ընթացքում:

Հիվանդության զարգացմանը նպաստում է շոգ ու չոր եղանակին հաջորդող անձրևային տաք եղանակը: Ուժեղ է զարգանում, երբ հողում պակասում է կալիումը: Հիվանդությունը տարածված է Արարատյան դաշտից մինչև կարտոֆիլի մշակման ամենաբարձր շրջանը:

**ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Կատարել խորը վար (բուսական մնացորդները վերացնելու նպատակով) և պտղափոխություն, ապա՝ հանքային պարարտանյութերի համալիրով, կալիումի բարձր չափաբաժիններով պարարտացում: Կո-

կոնակալման փուլի սկզբում սրսկել Բորդոյան հեղուկի 1%-ոց լուծույթով, անհրաժեշտության դեպքում, կրկնել 10-12 օր ընդմիջումներով՝ ֆիտոֆտորոզի դեմ օգտագործվող պատրաստուկներով, որոնք արդյունավետ են նաև մակրոսպորիոզի դեմ: Եթե պայքար է տարվում ֆիտոֆտորոզի դեմ, կարիք չկա առանձին բուժում մակրոսպորիոզի համար:

Առաջարկվում է կարտոֆիլի ֆիտոֆտորոզի և մակրոսպորիոզի դեմ պայքարում կիրառել նոր, առավել արդյունավետ պատրաստուկներ՝ Ռիդոմիլ-Գոլդ պլյուս, ԹՓ՝ սրսկում 4-5 կգ/հա, երեք անգամ՝ վեգետացիայի ընթացքում, Ռեվուս Տոպ, ԽԿ՝ սրսկում 0,5-0,6 լ/հա, չորս անգամ՝ վեգետացիայի ընթացքում, Պերգադո, ՋԴՀ, սրսկում 4-5 կգ/հա, չորս անգամ վեգետացիայի ընթացքում, Կվարդիս Մաքս, ԽԿ՝ 2-2,5 լ/հա, երեք անգամ՝ վեգետացիայի ընթացքում:

**ՍՈՎՈՐԱԿԱՆ  
ԿԱՄԱՆՏԻՆՈՄԻՑԵՏԱՅԻՆ ՔՈՍ**



Հարուցիչը՝ ակտինոմիցետների տարբեր ներկայացուցիչներն են: Հիվանդությունը տարածված է հանրապետության կարտոֆիլացան շրջաններում: Պալարների վրա մաշկը տեղ-տեղ պատվում է, պալարը պատվում է ոչ խոր ճեղքերով, որոնցից ներս են թափանցում միկրոօրգանիզմները՝ դառնալով փտման պատճառ:

Ընկնում է պալարների ապրանքային տեսքը, 5-30 %-ով նվազում օսլայի պարունակությունը, ավելանում է թափոնը, նվազում պահումնակությունը:



ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՍ

6

Հիվանդության հարուցիչը կուտակվում է հողում և բուսական մնացորդներում:

Թարմ, չփտած գոմաղբով պարարտացումը բարենպաստ պայմաններ է ստեղծում հիվանդության զարգացման համար: Նորմալ պահված պալարում վարակը ոչնչանում է: Հիվանդության զարգացմանը նպաստում է բարձր ջերմաստիճանը /հիվանդության համար արդյունավետ է 25°C և չոր եղանակը/:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ Կատարել ցանքաշրջանառություն և պտղափոխություն, հողի պարարտացում միայն փտած գոմաղբով, հիմնային հողերի պարարտացում՝ թթու պարարտանյութերով՝ սուպերֆոսֆատ, ծծմբաթթվային ամոնիում, ինչպես նաև՝ առողջ սերմանյութի տնկում:


ՌԻՉՈԿՏՈՆԻՈՉ ԿԱՄ ՍԵՎ ՔՈՍ

Հարուցիչը տունկ է: Ռիզոկտոնիոզն արտահայտվում է հիմնականում պալարների վրա՝ «սպիտակ ոտիկի» տեսքով, պալարների մակերեսին կպած ոչ մեծ խոցերի ձևով: Սև քոսը՝ ռիզոկտոնիոզը, կարտոֆիլի պարենային օգտագործման դեպքում, համարյա վնաս չի հասցնում, քանի որ խոցերը շատ մակերեսային են, և թափոնը չնչին է: Սերմացու կարտոֆիլի համար առավել վտանգավոր տեսակը սև քոսն է:

Վարակված պալարներով ցանքի դեպքում սկզբնորոշումները /վարակող սպորները/ ծյուն են ու վարակում ծիլերը՝ առաջացնելով մանր, ներս ընկած բծեր, որոնք հաճախ ձուլվում են՝ օղակաձև ընդգրկելով ծիլերը: Հիվանդ ծիլերը, սովորաբար, մահանում են երբեմն՝ մինչև հողի մակերես հասնելը: Այս երևույթը հատկապես նկատվում է վաղ և խորը ցանքի դեպքում, երբ պալարը ցանվում է ոչ բավարար տաքացած հողում: Ամռանը ռիզոկտոնիոզը կարող է նկատվել ավելի մեծ բույսերի վրա՝ սպիտակ ոտիկի տեսքով, ըստ որում՝ ցողունի ստորին մասը պատվում է բնորոշ սպիտակամոխրագույն թաղանթով: Ռիզոկտոնիոզի սկզբնական վարակի աղբյուր է վարակված սերմանյութը:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ Կարտոֆիլը ցանել լավ մշակված, նախապատրաստված, բավարար /7 °C-ից բարձր/ տաքացած հողում, ըստ որում՝ ծանր հողերում՝ 6-8, թեթև հողերում՝ մինչև 12 սմ խորությամբ: Հողի կեղևակայման դեպքում, կատարել փխրեցում՝ ցանքից 5-6 օր հետո և մինչև ծելը, ցանել ռիզոկտոնիոզից ազատ, վարակազերծ տնկանյութ, կիրառել պտղափոխություն և ցանքաշրջանառություն:

ՕՐԱԿԱՎՈՐ ՓՏՈՒՄ



Հարուցիչը բակտերիա է: Հանրապետությունում տարածված բակտերիալ հիվանդություն է: Արտահայտվում է բույսի թառամմամբ և պալարների փտմամբ: Թառամումը, սովորաբար, սկսվում է ծաղկման հետ միաժամանակ և շարունակվում մինչև վեգետացիայի վերջը: Սկզբում թառամում է 1-2 ցողուն, ապա՝ բոլորը հերթով: Ցողունի կտրվածքում նկատելի է սևացում, որը սեղմելիս մածուցիկ դեղին լորձ է դուրս գալիս:

Պալարների վրա վարակն արտահայտվում է օղակաձև և փոսիկավոր փտումներով: Օղակաձևի դեպքում արտաքինից պալարն առողջ է, սակայն, կտրվածքում նկատելի է ամբողջական կամ կտրված օղակ, սկզբում՝ կրեմագույն, ապա՝ դեղնավուն և վերջում՝ գորշ գույնի: Վարակված պալարը ցանելիս, արդեն վեգետացիայի սկզբում, մայրական պալարից բակտերիան անցնում է ցողունի ջրատար անոթներ՝ առաջացնելով մեխանիկական

խցանում, իսկ թուփը թառամում է: Միաժամանակ, ջրատար անոթներով վեր բարձրանալիս, բակտերիաների մի մասն իջնում է պալար և վարակում այն: Պալարների վարակման երկրորդ հնարավորությունը՝ հիվանդ պալարի շփումն է առողջի հետ, հատկապես, եթե կեղևը չի հաստացել, չի հաստացել կամ ունի մեխանիկական վնասվածքներ:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ Օգտագործել միայն առողջ տնկանյութ, սերմնադաշտերում բերքահավաքից 2-3 շաբաթ առաջ հեռացնել թփերը, բերքը հավաքել ժամանակին (երբ կեղևը կոշտացել է, ցանկալի է չոր եղանակին), անհրաժեշտության դեպքում՝ պալարները պահպանման դեպքում առաջ, չորացնել և լուսակոփել, ցանքից առաջ անպայման կատարել պալարային անալիզ: Եթե վարակվածությունը 2 %-ից ավելի է, ապա սերմացուն խոտանել:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ ՍԵՎ ՈՏԻԿ



Հարուցիչը մի խումբ բակտերիաներ են: Արտահայտվում է ինչպես պալարների, այնպես էլ բույսերի վրա: Վարակված թուփը փտում է, հիմնական ցողունը՝ սևանում: Տերևները սկզբում դառնում են ջրոտիկ, ոլորվում ջրի ուղղությամբ, ապա՝ դեղնում, չորանում: Վարակված ցողունը հեշտությամբ անջատվում է մայրական պալարից: Հիվանդությունը հանդես է գալիս վաղ, երբեմն՝ ծյունից անմիջապես հետո:

Պալարի վրա այն արտահայտվում է միջուկի փտմամբ, որը համարյա միշտ սկսվում է ստորինին ամրանալու տեղից: Պալարի միջուկը սևանում է: Պահպանման ժամանակ պալարը փտում է, որին մասնակցում է ոչ միայն սև ոտիկի հարուցիչը, այլև այլ բակտերիաներ: Հարուցիչ բակտերիան ձմեռում է տնկանյութում: Ուժեղ վարակի դեպքում բույսը՝ մինչև ծաղկելը, կարող է մահանալ, իսկ թույլ վարակի դեպքում՝ այն պալարներ է առաջացնում, որոնք վարակի սկզբնաղբյուր են: Բույսը կարող է վարակվել նաև բերքահավաքի ժամանակ, երբ առողջ պալարը շփվում է հիվանդի հետ, մանավանդ մեխանիկական վնասվածքների դեպքում: Հիվանդությունը շատ տարածված է հանրապետությունում, հատկապես՝ Արարատյան դաշտում:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ Տնկելու համար օգտագործել միայն առողջ տնկանյութ բերքահավաքը կատարել այնպես, որ հիվանդ փրերը չշփվեն պալարների հետ /բերքահավաքից առաջ փրերը հնձել, հեռացնել/, մեխանիկական վնասվածքով պալարներն առանձնացնել:

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կան կարտոֆիլի բազմաթիվ վիրուսային հիվանդություններ, որոնք տարածված են հատկապես տաք կլիմա ունեցող շրջաններում: Տարածված են կնճռոտ, շերտավոր մոզակաները, տերևների ոլորումը, ստոլբուրը: Սրանք լայնորեն տարածված են նաև մեր հանրապետությունում: Պայքարը դրանց դեմ ընդհանուր է՝ սերմի, պալարի նախացանքային ծլեցում՝ լույսի տակ և ցանքի ժամանակին կատարում (ցանկալի է՝ վաղ): Կարտոֆիլի սերմնադաշտը ապրանքային կարտոֆիլի ցանքից պետք է ունենա առնվազն 1000 մ հեռավորություն, վեգետացիայի ընթացքում անհրաժեշտ է սերմնադաշտից հիվանդ բույսերի պարբերաբար հեռացում, մոլախտերի վերացում և ժամանակին տարվող պայքար՝ հիվանդությունը փոխանցող միջատների դեմ, տաք շրջաններում ամառային ցանք՝ հնարավորինս ուշ ժամկետներում: Այդպիսի ցանքերից փոխանցող ցիկադները խուսափում են:

Ալֆրեդ Գրիգորյան կենսաբանական գիտությունների թեկնածու

Օրգանական գյուղատնտեսություն

Հայտնի են անվճար հավաստագրման մրցույթի հաղթողները

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի և Գերմանիայի բնութային պահպանության միության (NABU) համագործակցությամբ իրականացվող «Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի» անվճար հավաստագրման առաջին ծրագիրը հասել է վերջնական փուլին:

Բանկի մարքեթինգի վարչության փոխանցմամբ, ծրագրին դիմած տասնյակ տնտեսվարողներից, մրցույթի արդյունքում, հաղթող են ճանաչվել չորսը՝ Մեղր արտադրող «Մեր սարեր հողիկն» ՍՊԸ-ն, «Մեգա Արարատ» լեռնային հատապտուղների, խոտաբույսերի հավաքմամբ և թեյի պատրաստմամբ զբաղվող ընկերությունը, «Արմբերի» ՍՊԸ-ն, որը զբաղվում է ազնվամորու աճեցմամբ, Վահագն Հակոբյան անհատ ձեռներեցը, ով զբաղվում է մոշի աճեցմամբ:

«Ներկայումս մրցույթում հաղթող ճանաչված բոլոր տնտեսությունները գտնվում են հավաստագրման գործընթացում: Մոտ ժամանակներս դրանցից առաջինը կհավաստագրվի, որից հետո եվրոպական շուկա պատրաստի արտադրանքի արտահանման բավականին լայն հնարավորություններ կստեղծվեն, իսկ մինչև տարեվերջ կավարտվի մյուս տնտեսությունների հավաստագրումը», - ասել է ՆԱԲՈՒ-ի Հայաստանյան գրասենյակի ղեկավար Նարեկ Գրիգորյանը:

«Գյուղական համայնքներում փոքր և միջին տնտեսությունների զարգացումը առանցքային տեղ է զբաղեցնում ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության մեջ:

Ծրագրով, փաստորեն, ամբողջական արտադրական փուլ է փակվում՝ ընդհուպ մինչև աջակցություն արտահանմանը, ստեղծվում են նոր աշխատեղեր և ներգրավված ձեռնարկությունների զարգացման շրջափեղի հեռանկարներ են բացվում: Այսպիսով, մենք Հայաստանում յուրաքանչյուր շարժում ենք ստեղծում՝ նպաստելով գյուղական համայնքներում օրգանական սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ՓՄՁ-ների զարգացմանը: Այս ծրագիրը կրելու է շարունակական բնույթ», - նշել է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի հասարակայնության հետ կապերի պատասխանատու Նարեկ Ասատրյանը:

www.panorama.am

Արտադրություն

Բացման հանդիսավոր արարողություն

Վերջերս Տավուշի մարզի Լուսաձոր համայնքում տեղի ունեցավ պանրագործարանի ընդլայնված մասի բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցել են Ֆրանսիայից Հայաստան ժամանած Օ-դը-Սեն դեպարտամենտի խորհրդի նախագահ և պատգամավոր Պատրիկ Դեջյանի գլխավորած պատվիրակությունն ու Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը:



Արարողությանը ներկա էին նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան ժան-Ֆրանսուա Շարպանտիեն, Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիթեջյանը, պաշտոնատար այլ անձինք, մարզի համայնքների ղեկավարները:

Սկսած 2008 թվականից՝ համաձայն ստորագրված ապակե տրոնացված շրջանակային համաձայնագրի, Օ-դը-Սեն դեպարտամենտն աջակցում է Տավուշի մարզի անասնապահական ոլորտի զարգացմանը՝ Ֆրանսիայի Համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի միջոցով: Ավելի քան 4,2 մլն եվրոյի ներդրումներ են իրականացվել: Ծրագրում ներգրավված է շուրջ 25 հազար շահառու:



www.tavush.mtaes.am



### ՀԵՏԱԲՈՒՔԻՐ Է...

## «ԶՈՔԱՆՉԻ ԼԵԶՈՒ»

Սանսևիերան կամ «զոքանչի լեզու» ծնեբեկազգիների ընտանիքի մկնափշազգիների (Ruscaceae) ենթաընտանիքին պատկանող բույսերի ցեղ է. ընդգրկում է մոտ 60 տեսակ: Հայրենիքը՝ Կենտրոնական Աֆրիկան է, Մադագասկար կղզին ու Հնդկաստանը:

Բույսը լավ է հարմարվում չոր, քարքարոտ հողատեսքերի վրա, կարող է աճել լավ լուսավորված, արևոտ և ստվերոտ վայրերում, չորադիմացկուն և երաշտադիմացկուն է: Շատ լավ զարգանում է չափավոր խոնավ, պարարտ հողերի վրա: Սանսևիերայի սրածև տերևների վարդակն աճում է անմիջապես կոճղարմատից, որը տարածված է հողի մակերեսային շերտին մոտ: Տերևների երկարությունը կարող է հասնել մեկ մետրի, իսկ լայնքը՝ 2,5-7 սմ-ի, տերևի արտաքին շերտը խիտ է և կաշվեկերպ, փայլուն գույնով կամ միատարր ծածկույթով. կանաչ տերևաթիթերը

եզերված է դեղնավուն գույնով: Ծաղկակիր ցողունը երկար է, ծաղիկները տեղակայված են ցողունի երկայնքով, մանր են՝ հավաքված փոքր փնջիկների մեջ: Ծաղկած սանսևիերայի տեսքը շատ գեղարվեստական է՝ դեպի երկինք խոյացող սրածայր տերևները, սպիտակ ծաղկակիր ցողունը՝ առաջացնում են մարդու մոտ նպատակասլացություն և առաջադիմելու ցանկություն:

Բույսերի հետ կապված են բազմաթիվ հավատալիքներ, որոնք ճիշտ չի լինի, եթե սևահավատություն համարենք: Այսօր բույսերի էներգետիկ ներազդեցության չափը և ուղղվածությունը հանգամանորեն ուսումնասիրվում են: Սանսևիերայի վերաբերյալ մասնագետները հայտնում են հետևյալ կարծիքը.

- կլանում է աշխատասենյակի կամ բնակարանի բացասական լիցքերը,
- կարծացնում է «չար» լեզուները,

• չեզոքացնում է խոսքի կամ մտքի միջոցով արտահայտված չարակամությունը,

• ստեղծում է բարի, ջերմ, չարությունից և կոպտությունից զերծ անկաշկանդ մթնոլորտ, որը տրամադրում է ստեղծագործ աշխատանքի և նորանոր բարձունքների նվաճման: Մասնագետները կարծում են, որ բույսը պաշտպանում է էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունից, հատկապես անփոխարինելի է այն տարածքների համար, որոնք վատ են լուսավորված, բույսը կարող է աճել նույնիսկ արհեստական լուսավորության պայմաններում:

Որպես սենյակային բույս՝ սանսևիերան ունի նաև այլ կարևոր հատկություն. մաքրում է տան օդը ժամանակակից արհեստական շինանյութերից պատրաստված կահավորանքի արձակած վնասակար նյութերից: Նման հատկություն ունեցող բույսերի շարքին են դասվում նաև՝ խլորոֆիտում

փուլի ուշավորը, բեզոնիայի մի քանի տեսակներ, դեֆենբախիա պուլտիկավորը, մոնստերա դելիցիոզը, ֆիկուս բենջամինի և այլ խիտ կաշվեկերպ տերևներ ունեցող բույսեր:



Սանսևիերան բազմաբույս է տերևի միջոցով, տերևը արմատ է տալիս և կարող է երկար ժամանակ աճել ջրի մեջ, կարևոր է ժամանակին փոխել ջուրը: Սանսևիերան առաջին անգամ մշակել է Իտալիայի Նեապոլ քաղաքում ապրող իշխան Սանսևիերոն, որի անունը փոխանցվել է բույսին և դարձել նաև գիտական անվանում՝ Sansevieria trifasciata, այսինքն՝ եռափունջ կամ եռազուլավոր: Անգլիացիներն անվանում են՝ «ընծառյուծի շուշան» կամ «օձի բույս», ամերիկացիները՝ «օձի կաշի», գերմանացիները՝ «ամերիկյան կանեփ», ի դեպ, նշենք, որ բույսը չունի թմրեցնող հատկություն, իսկ ռուսները՝ «գայլածուկի պոչ» կամ՝

«կկվի պոչ»: Բույսը ստացել է ևս մեկ անվանում՝ «զոքանչի լեզու», որը, ելնելով սանսևիերայի նկարագրությունից, վկայում է մայրերի՝ ապագա զոքանչների և սկեսուրների անչափ դրական նկարագրի մասին:

Սանսևիերան դասվում է արտաքին ազդեցությունների հանդեպ առավել դիմացկուն բույսերի շարքին, նման բույսերն ունեն արդարադեպ հատկություն, այսինքն՝ բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը սթրեսի հանդեպ, հանգստացնում են նյարդերը, օգնում կողմնորոշվել բարդ իրավիճակներում:

Լիլիթ Գասպարյան

## ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրերս, Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լանջաղբյուր և Սարուխան համայնքներում, Գյուղատնտեսության աջակցության հանհապետական և մարզային աջակցության կենտրոնների հետ համատեղ, կազմակերպվել էր խորհրդատվական միջոցառում:

«Տոհմային գործի կազմակերպումը և նախ-

բանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը: Նա սեմինարի մասնակիցներին բացատրեց ֆիտոֆտորոզ, մակրոսպորիոզ, սովորական քոս, կարտոֆիլի բակտերիալ սև ոտիկ, օղակավոր փտում և այլ հիվանդությունների մասին: Խորհուրդներ տվեց ինչպես պայքարել և ինչ թունաքիմիկատներ օգտագործել:



րի վերարտադրությունը գյուղացիական տնտեսություններում» թեմայով խորհրդատվական աշխատանքները վարում էր գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Գիլոյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց անասնաբուծության զարգացման դերն ու նշանակությունը ներկա պայմաններում: Մասնավորապես նշեց, որ անհրաժեշտ է արմատական վերակառուցում և ծրագրավորում տոհմային գործի կազմակերպման համար:

«Կարտոֆիլի հիվանդությունները և պայքարը դրանց դեմ» թեմայով վարում էր կենսա-

բանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը: Նա սեմինարի մասնակիցներին բացատրեց ֆիտոֆտորոզ, մակրոսպորիոզ, սովորական քոս, կարտոֆիլի բակտերիալ սև ոտիկ, օղակավոր փտում և այլ հիվանդությունների մասին: Խորհուրդներ տվեց ինչպես պայքարել և ինչ թունաքիմիկատներ օգտագործել:

Ավարտին ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Ա. Հայրապետյանը, Գ. Գիլոյանը, Ա. Գրիգորյանը պատասխանեցին մասնակիցներին հետաքրքրող հարցերին:


Մասնակիցներին տրամադրվեցին մատուցվող նյութերի վերաբերյալ նախապես մշակված տեղեկատվական թերթիկներ և «Ոսկե Հասկ» թերթեր:

Գեղարքունիքի ԳԱՄԿ

## ՀԱՅՏԱՐԱՐԱՌԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:



Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե 2016 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<b>«ԱԳՐԱԼՐԱՏՈՒԹՅՈՒՆ» թերթ</b>	<b>«ԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ամսագիր</b>
1 համարի գինը՝ 120 դրամ	1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ	1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները

«Հայփոստ»,  
«Հայմամուլ»,  
«Պրես-Ատտաշե»

կազմակերպությունները